

ԵՎԻՐՎՈՒՄ Է ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ

ՄԱՆԵ (ԷՌՆԱ) ՇԻՐԻՆՅԱՆ

Պարունական գիտությունների դոկտոր

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏՆ ԸՍՏ «ԳԻՐՔ ՊԱՏՃԱՌԱՑ»-Ի

Գրիգոր Աբասյանի (1150?-1221? թթ.) «Գիրք պարճառաց» ծայրաստիճան ուշագրավ, անսխալ ժողովածուն առանձնանում է իր թեմատիկ լայն ընդգրկմամբ և ծավալով: Այն մեզ է հասել երեք ամբողջական¹ և մի քանի հատվածաբար ներկայացված ձեռագրերով: Դրանցից հնագույնը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1879 ձեռագիրն ունի հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Պարճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարցն տրոց և ի վարդապետաց, և ի մի հասարեալ և հոգացեալ մեծ յաբունապետին Գրիգորի, որդւյն Աբասայ»²: 13-րդ դարից մեզ հասած այդ ընդօրինակությունը հետաքրքրական ձեռագրագիտական նյութ է պարունակում, քանզի այդպեղ առկա են գրչության փարբեր ձևեր: Ձեռագրի մեծ մասը գրված է բուրգրով, սակայն հանդիպում ենք նաև նուրբգրով, շղագրով և, ամենակարևորը, երկաթագրով գրված կտորներ, փողեր և բառեր, ինչը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ այդ գրչագիրը գրվել է փարբեր գրիչների կողմից³:

Ինչպես երևում է արդեն իսկ խորագրից, երկը պարունակում է Աստվածաշնչի և «նուրբ» գրվածքների մեկնություններ: Այս վերնագիրը պահպանվել է թիվ 1879 ձեռագրում և հավելված է Խաչատուր Կենչամեցու «ձեռամբ» երկի սկզբում, խորանի մեջ⁴: Խաչատուր Կենչամեցին եղել է այս ձեռագրի երկրորդ ստացողը: Հ. Մնասյանը նշում է. «որ այն Խաչատուր Կենչամեցու ձեռքն է անցել քայքայված, միջից ու վերջից որոշ թերթերի պակասով, իսկ առաջին թերթը նույնպես կորած, բայց մի ուրիշի կողմից նորից գրված վիճակում: Խաչատուր Կենչամեցին «Գիրք պարճառաց»-ի մի ուրիշ օրինակի հիման վրա իր ձեռքով ավելացրել է գրքի վերնագիրը...»⁵:

¹ Տե՛ս ՄՄ, թիվ 1879, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրատան թիվ 3325 և Վիեննայի մատենադարանի թիվ 47, որը պատճենված է ՄՄ, թիվ 1879 գրչագրից: Վիեննայի թիվ 47 ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս՝ Տաշեան, Ցուցակ, էջ 213-233:

² ՄՄ, թիվ 1879, տե՛ս նաև՝ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, Ա, էջ XIII-XVI:

³ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1879 ձեռագրի առաջին նկարագրությունը կատարել է Էշմիածնի մատենադարանապետ Սահակ վարդապետ Ամատունին (նկարագրությունում առանձին թերթով փակցված է ձեռագրի կազմին): Նա է կազմել նաև գրչագրի վերջում հավելված «ցանկը ըստ գլխակարգութեանց», ինչպես նաև որոշ մշտմաներ է արել ձեռագրի լուսանցքներում: Հետագայում այս ձեռագիրը նկարագրել են Մ. Տեր-Մովսեսյանը և Հ. Կարենյանը: Համառոտ և միևնույն ժամանակ համապարփակ այն ներկայացված է նաև Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» գրքում, Երևան, 1959, հտ. Ա, էջ XIII, ծմ. 3:

⁴ ՄՄ, թիվ 1879, 3ա, հմմտ. նաև Վիեննայի մատենադարանի թիվ 47, 6բ:

⁵ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, Ա, էջ XIII:

Արդյոք եղել է այս անվանումը Գրիգոր Աբասյանի գրվածքում դժվար է ասել, քանզի նրա ինքնագիրը մեզ չի հասել: Փաստորեն խաչատուր Կեչառեցու այս հավելման շնորհիվ է նաև, որ պահպանվել է երկի հեղինակային պատկանելության հանգամանքը: Ելնելով նույն այս խորագրից, կարելի է ասել, որ գիրքը բաղկացած է երկու բաժնից՝ «նուրբ» և «լայն» գրվածքների «պատճառ»-ներից: Մակայն դրանք ներկայացված են երեք մասերով, հետևյալ հաջորդականությամբ՝ Հին Կրակարանի գրքերի «պատճառ»-ներ, հայրաբանական ու իմաստասիրական երկերի «պատճառ»-ներ և Նոր Կրակարանի «պատճառ»-ներ:

Վերնագիրը հուշում է նաև, որ ժողովածուն պետք է դասել և՛ մատենագիտական բնույթի, և՛ մեկնողական երկերի շարքում, քանզի այն պարունակում է ուսուցման համար անհրաժեշտ թե՛ Աստվածաշնչի և թե՛ «ներշնչական» նյութերի պատճառները: «Պատճառ»-ները՝ մեկնության փոխակ են կամ, ավելի ստույգ ասած, մեկնություններին նախորդող ներածական բացատրություններ են: Ուստի դրանցից կազմված ամբողջ երկը պետք է համարել նաև մեկնողական բնույթի գրվածք: Այս առումով բնորոշել գիրքը որպես «գիտություն գրոց»⁷ կամ «մատենագիտություն»⁸ ճիշտ չի թվում: Այս գործը կարելի է անվանել հայերեն թարգմանված աղբյուրների մեզ հասած առաջին հայկական միջնադարյան հանրագիտարան:

Նկատենք նաև, որ «Գիրք պատճառաց»-ը ներառում է հիմնականում թարգմանական նյութը. դրանց «պատճառ»-ները մեծով մասամբ ևս թարգմանված են:

Այսպիսով, ձեռնարկը ներածական նյութ էր պրամադրում ուսումնական ծրագրի երկու կարևորագույն բաղադրիչ մասերի համար՝ Աստվածաշնչի և հայրաբանական աստվածաբանության ու հունական փիլիսոփայության հիմնական երկերի բացատրություններ:

«Լայն» և «նուրբ գրեանք» անսովոր բնորոշմամբ տերմինները միասին առաջին անգամ վկայված են «Գիրք պատճառաց»-ում: «Լայն» եզրով բնութագրված է Ս. Գիրքը, իսկ «նուրբ գրեանք»-ը մատենագիտական և մեկնողական որոշակի երկերի փոխակ մատենաշնչող (ըստ իս, կրոնի փիլիսոփայությանը վերաբերող կամ առնչվող) արքայապետություն է: «Գիրք պատճառաց»-ի Բ բաժնի՝ «նուրբ գրեանք»-ի արժեքավոր տեղեկությունները կարևորվում են ոչ միայն հայագիտության, այլև նշանակալի են դասական բանասիրության ու բյուզանդագիտության համար:

Առանձին բնության կարիք ունի և բացատրության է կարող «Գիրք պատճառաց»-ում ընդգրկված գործերի նշված հերթականությունը, կարգը՝ սկզբից ներկայացված են Հին Կրակարանի գրքերի «պատճառ»-ները, հետո հայրաբանական ու իմաստասիրական երկերինը և վերջում Նոր Կրակարանինը: Թե ինչո՞ւ են ընդմիջարկված Հին և Նոր Կրակարանները «նուրբ գրեանք»-ով պրամաբանական հարցին կարելի է առաջարկել հետևյալ պատասխանը: Նյութի հաջորդականությունը պատահական չէր. Հին Կրակարանը, որը «լայն» է կոչվում, ընդհատված է «նուրբ գրեանք»-ով, քանի որ դրանք հիմնականում աստվածաբանության փիլիսոփայությանը վերաբերող մեկնողական բնույթի երկեր են, որոնք

⁶ Մ. Ծիրինյան, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Աշտանակ Գ, Հայագիտական պարբերագիրք, Երևան, 2000 թ., էջ 36-64: Հարկ է նշել, որ «Գիրք պատճառաց»-ում համոզված է մեզ «սկիզբ» մեկնողական ձևը:

⁷ Ն. Ակիմեան, Մատենագրական հետազոտություններ, հտ. Ա, Վիեննա, 1922, էջ 58:

⁸ Հ. Անասյան, Հայկական Մատենագիտություն, Երևան, 1959, հտ. Ա, էջ XIV:

օրգանական կապ ստեղծելով Հին և Նոր Կրակարանների միջև, անհարաժեշտ օղակ էին հանդիսանում Հին Կրակարանից Նոր Կրակարանին անցնելու համար:

Պետք է նշել նաև Դավիթ Քոբայրեցու գործունեությունը, որի ավանդը «Գիրք պարճառաց»-ի ստեղծման գործում հայտնի է, սակայն դեռևս ըստ արժանվույն չէ ուսումնասիրված: Նրա գրչին են պատկանում այդ բնագրում ամփոփված երկերից շատերի պարճառները, լուծմունքներն ու մեկնությունները:

«Գիրք պարճառաց»-ի հարուստ նյութը լրացնում է մեր գիտելիքները բազմաթիվ չուսումնասիրված հարցերի վերաբերյալ (օրինակ՝ Գրիգոր Նյուսացու երկերի թարգմանության կամ "Vita Homeri"-ի փարբեր խմբագրությունների մասին): Առանձին ուսումնասիրության հարց է, թե ինչ ճանապարհով են անցել անտիկ ավանդույթներից սերող բրիտանացի ման ուշագրավ օրինակները Գրիգոր Աբասյանի երկի մեջ:

Խնդրո առարկա գրվածքի հրապարակությունը հայագիտության այսօրվա առաջնահերթ խնդիրներից է: Այդ բացառիկ երկը, մտնելով շրջանառության մեջ, կլրացնի ոչ միայն հայկական, այլև համամարդկային մշակութային գանձարանը: Այդ պարճառով է, որ բրևական բնագրի պարբերատու (ներածությամբ ու մանրամասն ծանոթագրություններով), որի աշխատանքն արդեն կիսով չափ արված է, կհամալրվի նաև անգլերեն թարգմանությամբ: Նշենք նաև, որ այդ ծրագիրը հնարավոր դարձավ իրագործել շնորհիվ ՏՕՖ-ից ստացած դրամաշնորհի, որի համար «Գիրք պարճառաց»-ով զբաղվող աշխատանքային խմբի անունից իմ շնորհակալությունն եմ հայտնում այդ կազմակերպությանը, հանձնաժողովի անդամներին և ընդդիմախոսներին, ներկայացված նախագծի բարձր գնահատականի ու այս կարևորագույն աղբյուրի հրապարակության ընձեռված հնարավորության համար:

«Գիրք պարճառաց»-ից ստորև ներկայացվող հատվածը նվիրված է Մաշտոցյան գրերի արարմանը: Այն, իհարկե, մեծապես հիմնված է և որոշ չափով կրկնում է Կորյուն վարդապետի «Պարմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի» երկի վկայությունները, սակայն միաժամանակ պարունակում է ոսկեդարյան շրջանի պարմիչների տեղեկություններից շեղվող, հավելյալ և ուշագրավ մի շարք այլ մեկնաբանություններ: